ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորական ուղերձը Վերջին դասի կապակցությամբ

26.05.2023

Սիրելի՛ շրջանավարտներ,

ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Վերջին դասի կապակցությամբ:

Համոզված եմ, որ դպրոցական տարիներին ստացած գիտելիքները, հայեցի դաստիարակությունն ու ազգային արժեքների ոգով կրթությունը կօգնեն ձեզ՝ սեփական ունակություններն ու կարողությունները ճիշտ ծառայեցնել մեր երկրի շենացմանն ու բարգավաճմանը:

Այսօր դուք գտնվում եք կյանքի մի նոր շրջափուլում: Ճանապարհներն ուր էլ որ ձեզ տանելու լինեն, ցանկանում եմ, որպեսզի այն անցնեք առանց ցնցումների, հաստատուն, վստահ քայլերով, դպրոցում ձեռք բերած գիտելիքները կարողանաք կատարելագործել, հետզհետե ավելի ամրապնդել և դուրս գալ նոր ուղեծիր:

Սիրելի՛ շրջանավարտներ, մաղթում եմ ձեզ անսպառ հաջողություն, կամք և համառություն, կանաչ ճանապարհ, խաղաղ ու ստեղծագործ աշխատանք, նոր ձեռքբերումներ՝ առօրյա կյանքում, ուսման մեջ, նախընտրած բնագավառում: Թող իրականություն դառնան ձեր բոլոր ձգտումները:

Հարգելի՛ ուսուցիչներ, ծնողներ, ձեզ նույնպես շնորհավորում եմ այս հիշարժան տոնի առիթով: Շնորհակալ եմ ձեր ջանքերի ու նվիրումի համար

Վստահ եմ՝ ձեր տված փորձն ու գիտելիքն ուղենշային կլինեն մեր շրջանավարտների՝ որպես հայրենանվեր քաղաքացիներ ձևավորման գործում:

Սիրելի՛ շրջանավարտներ, ձեր ուժն ու եռանդը ծառայեցրե՛ք հայրենիքի բարօրությանը, մեր պետության կայացմանն ու արժանապատիվ ապագային:

Ձեզ բարի երթ: